

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդաբանությամբ սահմանվում են հանրային ներդրումային ծրագրերի (սախա)գնահատման չափորոշիչները, դրանց կշիռները և դրանց հիման վրա ծրագրերի գնահատման կարգը:

2. Սույն մեթոդաբանությամբ օգտագործված հասկացություններն ունեն հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգով սահմանված նշանակություն:

3. Հանրային ներդրումային ծրագրերի (սախա)գնահատման հիմնական սկզբունքը միջին և խոշոր ծրագրերի նկատմամբ միասնական չափորոշիչների կիրառումն է:

4. Ծրագրի (սախա)գնահատման արդյունքում ձևավորվում է հանրային ներդրումային ծրագրի կշռված գնահատական:

2. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

5. Հանրային ներդրումային ծրագրերի (սախա)գնահատման չափորոշիչներն են՝

1) մարդկային կապիտալի վրա ազդեցությունը (կշիռը՝ 1), որով գնահատվում է ծրագրի ազդեցությունը Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի վրա.

2) ենթակառուցվածքի հանրային նշանակությունը (կշիռը՝ 1), որով գնահատվում են հանրային ծառայությունների մատուցման տեսանկյունից տվյալ ծրագրի իրականացման հրատապությունն ու անհրաժեշտությունը.

3) ոլորտի ռազմավարության համապատասխանությունը (կշիռը՝ 1), որով գնահատվում է ծրագրի ուղղակի, մասնակի կամ անուղղակի համապատասխանությունը տվյալ ոլորտային ռազմավարությանը.

4) ծրագրի ռիսկայնությունը (կշիռը՝ 1), որով գնահատվում են ծրագրի իրականացմանը խոչընդոտող փաստացի արձանագրված ռիսկերը և դրանց կառավարելիությունը.

5) տնտեսական շահութաբերության ներքին դրույքը (ՏՇՆԴ) (կշիռը՝ 1.5):

6. Մարդկային կապիտալի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) 3 միավոր գնահատվում են այն ծրագրերը, որոնք ուղղակի նպաստում են Հայաստանի Հանրապետությունում մարդկային կապիտալի ստեղծմանը: Ծրագիրը համարվում է մարդկային կապիտալ ստեղծող, եթե դրանով թիրախավորվում է անչափահաս քաղաքացիների բարեկեցությունը (առողջություն, կրթություն, անվտանգություն, սոցիալականացում և այլն).

2) 2 միավոր գնահատվում են այն ծրագրերը, որոնք ունեն մարդկային կապիտալի պահպանման նշանակություն, և որոնց իրականացման հիմնական թիրախն է չափահաս անձանց աշխատունակության շարունակականության ապահովումը.

3) 1 միավոր գնահատվում են այն ծրագրերը, որոնք ուղղված են մարդկային կապիտալի բարելավմանը կամ զարգացմանը, և որոնց իրականացման հիմնական թիրախը չափահաս քաղաքացիների կողմից եկամուտներ գեներացնելու կամ հանրային բարիքի ստեղծելուն միտված կարողության բարձրացումն է:

7. Ենթակառուցվածքի հանրային նշանակության գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) 3 միավոր գնահատվում են այն ծրագրերը, առանց որոնց իրականացման՝ հանրային բարիքների ստեղծումը կամ հանրային ծառայությունների մատուցումը դառնում է անհնարին, կամ որոնց իրականացումն օրենսդրությամբ հստակ սահմանված պահանջ է.

2) 2 միավոր գնահատվում են այն ծրագրերը, որոնց իրականացումը նպաստում է հանրային բարիքների ստեղծման կամ հանրային ծառայությունների մատուցման տեսանկյունից էական բարելավումների.

3) 1 միավոր գնահատվում են այն ծրագրերը, որոնց իրականացումը նպաստում է հանրային բարիքների ստեղծման կամ հանրային ծառայությունների մատուցման տեսանկյունից ոչ էական բարելավումների:

8. Ոլորտի ռազմավարությանը համապատասխանության գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) 3 միավոր գնահատվում են այն ծրագրերը, որոնց արդյունքներն անմիջականորեն ուղղված են ռազմավարությանը ամրագրված խնդրի լուծմանը կամ (ենթա)նպատակի իրականացմանը.

2) 2 միավոր գնահատվում են այն ծրագրերը, որոնց արդյունքների մի մասն առնչվում է ռազմավարությանը ամրագրված խնդրի լուծմանը կամ (ենթա)նպատակի իրականացմանը.

3) 1 միավոր գնահատվում են այն ծրագրերը, որոնք անմիջականորեն չեն նպաստում պետական կամ համայնքային ռազմավարական նպատակների իրագործմանը, կամ տվյալ ոլորտի ռազմավարություն առկա չէ:

9. Սույն մեթոդաբանության 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված չափորոշիչները կարող են գնահատվել 0 միավոր, երբ համապատասխան չափորոշիչով ծրագրի ազդեցությունը կամ դրան համապատասխանությունը բավարար հիմնավորված չէ կամ բացակայում է:

10. Ծրագրի ռիսկայնությունը գնահատելու համար պետք է հաշվի առնել ստորև ներկայացվող գործոնները՝

1) իրավասու մարմնի կողմից նմանատիպ ծրագրի իրականացման փորձի առկայությունը և արժեքը.

2) հաստատված պահանջարկի առկայությունը, ինչպես նաև հնարավոր արտաքին գործոնների ազդեցությունը ծրագրի արդյունավետ իրականացման վրա.

3) շահագործման և պահպանման ծախսերի գնահատման առկայությունը.

4) ռիսկերի հատկորոշումը և վերլուծությունը, ինչպես նաև կառավարելիությունը:

11. Հիմք ընդունելով սույն մեթոդաբանության 10-րդ կետով նախատեսված գործոնների վերլուծությունը՝ ծրագրի ռիսկայնության գնահատումն իրականացվում է հետևյալ կերպ՝

- 1) 3 միավոր գնահատվում են ցածր ռիսկային ծրագրերը.
- 2) 2 միավոր գնահատվում են միջին ռիսկային ծրագրերը.
- 3) 1 միավոր գնահատվում են բարձր ռիսկային ծրագրերը:

12. Ծրագրի տնտեսական շահութաբերության ներքին դրույքի հաշվարկն իրականացվում է համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվող ուղեցույցների, իսկ մինչև դրանց հաստատումը՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից սահմանված կիրառելի մեթոդաբանությամբ:

13. Ծրագրի տնտեսական շահութաբերության ներքին դրույք չափորոշիչով ծրագրերի միավորները որոշվում են հետևյալ կերպ՝

- 1) տնտեսական շահութաբերության ներքին դրույքի առավելագույն ցուցանիշ ունեցող ծրագիրը գնահատվում է 3 միավոր, որից հետո՝
- 2) մնացած ծրագրերը դասակարգվում են առավելագույնից հեռավորության սկզբունքով՝ հետևյալ բանաձևի կիրառությամբ.

$$S_i = \frac{\ln EIRR_i}{\ln EIRR_M} \times 3, \text{ որտեղ}$$

S_i - տվյալ ծրագրի միավորը

$EIRR_i$ – տվյալ ծրագրի տնտեսական շահութաբերության ներքին դրույք

$EIRR_m$ – դիտարկվող ծրագրերից առավելագույն տնտեսական շահութաբերության ներքին դրույքը:

Ընդ որում, բացասական տնտեսական շահութաբերության ներքին դրույքի դեպքում ծրագրի տվյալ չափորոշիչը գնահատվում է 0 միավոր: Բացասական տնտեսական շահութաբերության ներքին դրույքով ծրագրերի դասակարգման

ժամանակ առաջնահերթությունը տրվում է առավել բարձր արժեք ունեցող ծրագրին:

14. Տնտեսական շահութաբերության ներքին դրույքի առաջին գնահատումն իրականացվում է ծրագրի նախագնահատման փուլում, իսկ տնտեսական շահութաբերության ամբողջական գնահատումն իրականացվում է ծրագրի գնահատման փուլում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ